

« 09 » 08 2021թ.

№ ՎՍ / 24400

ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի նախագահ՝
պրն. Գ. Բաղրամյանին

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Բաղրամյան

ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016թ-ի դեկտեմբերի 9-ի <<Վեոլիա Ջուր>> փակ բաժնետիրական ընկերությանը խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա տրամադրելու մասին>> N 397Ա որոշմամբ հաստատված Լիցենզիայի պայմանների N 1 հավելվածի համաձայն՝ հաշվարկվել են <<Վեոլիա Ջուր>> փակ բաժնետիրական ընկերության կողմից սպասարկվող տարածքների խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայության մատուցման սակագները:

Կից ներկայացված հաշվարկի արդյունքում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) մանրածախ ծառայությունների մատուցման սակագների գումարային մեծությունը կազմում է 223.7 դրամ/լիտր (ներառյալ ԱԱՀ-ն):

Ելնելով նշվածից, խնդրում եմ վերանայել <<Վեոլիա Ջուր>> փակ բաժնետիրական ընկերության կողմից սպասարկվող տարածքների խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայության մատուցման սակագները:

Առաջարկվող՝

1. Խմելու ջրի մատակարարման ծառայության մատուցման մանրածախ սակագինը՝ 158.454 դրամ՝ յուրաքանչյուր խորանարդ մետր մատակարարված խմելու ջրի դիմաց՝ առանց ավելացված արժեքի հարկի, և 190.145 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

2. Ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայության մատուցման մանրածախ սակագինը՝ 27.963 դրամ՝ յուրաքանչյուր խորանարդ մետր հեռացված ջրի դիմաց՝ առանց ավելացված արժեքի հարկի, և 33.555 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

3. Ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող այլ անձանց, ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող համայնքներին, համայնքային բյուջետային հիմնարկներին և ոչ առևտրային կազմակերպություններին՝

ա) խմելու ջրի մատակարարման մեծածախ ծառայության մատուցման սակագինը՝ 37.283 դրամ՝ յուրաքանչյուր խորանարդ մետր մատակարարված խմելու ջրի դիմաց՝ առանց ավելացված արժեքի հարկի, և 44.740 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը :

բ) ջրահեռացման մեծածախ ծառայության մատուցման սակագինը՝ 18.642 դրամ՝ յուրաքանչյուր խորանարդ մետր հեռացված ջրի դիմաց՝ առանց ավելացված արժեքի հարկի և 22.370 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը :

ՀՀ ԵՐԵՎԱՆ «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ
ԵԼԻՑ 24400
« 09 » 08 2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՑԻՆ ԾԱՌԱՅՈՒՅՈՒՄՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
4608 09 08 ՎՍ
2021թ.